



**Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից ձևավորած 01-11-2020 - 30-11-2020թթ. տվյալների ամփոփում**

Հաշտարարի գրասենյակը 01-11-2020 - 30-11-2020թթ. ընթացքում ստացել է ընդհանուր քանակությամբ 961 բողոք, որից՝ ֆինանսական կազմակերպություններին վերաբերող բողոքները 916-ն են:

Ֆինանսական կազմակերպություններին վերաբերող 916 բողոքներից 36-ը համաձայն «Ֆինանսական համակարգի Հաշտարարի» մասին ՀՀ օրենքի, ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից (որոշ պահանջների վերաբերյալ արդեն իսկ առկա է դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վճիռ, դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից քննվում է հաճախորդի և Կազմակերպության միջև նույն պահանջի առարկայի վերաբերյալ գործ, պահանջը չի ներկայացվել Օրենքով սահմանված ժամկետներում, Կազմակերպության լիցենզիայի գործողությունը դադարեցվել է և այլն):

Հաշտարարի քննությանը ենթակա բողոքների մի մասի դեպքում հաճախորդները նախապես դիմած չեն եղել ֆինանսական կազմակերպություններին. նման դեպքերում Գրասենյակի աշխատակիցները հաճախորդներին օգնել են գրել բողոք-պահանջներ: Հաշտարարի քննությանը ենթակա բողոքների մի մասն էլ բավարարվում են կազմակերպությունների կողմից՝ բողոք-պահանջների հիման վրա՝ առանց Գրասենյակ պահանջ-դիմում մուտք անելու. լինում են նաև բողոքներ, որոնց նախնական ուսումնասիրությունից հետո Հաճախորդին խորհուրդ է տրվում պահանջը չհանձնել քննության, քանի որ բացակայում է Հաճախորդի՝ որպես սպառողի շահերի ոտնահարման փաստը:

01-11-2020 - 30-11-2020թթ. Հաշտարարի գրասենյակը քննության է ընդունել 524 պահանջ-դիմում:

<b>Գրասենյակ ներկայացրած բողոքների քանակ (հատ), որից՝</b>	<b>961</b>
<b>Վերաբերում են ֆինանսական համակարգին՝</b>	<b>916</b>
1. Ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից	36
2. Ենթակա են քննության Հաշտարարի կողմից	880
2.1 Ընդունվել են քննության, ուղղված են՝	524
2.1. 1. Բանկերի դեմ, կապված են՝	245

• Վարկային գործարքների հետ	200
• Ավանդային գործարքների հետ	44
• Վճարահաշվարկային գործարքների հետ	1
<b>2.1. 2. Ապահովագրական ընկերությունների դեմ, կապված են՝</b>	<b>241</b>
• Մեքենայի ԿԱՄԿՈ ապահովագրության հետ	2
• Առողջության ապահովագրության հետ	2
• ԱՊՊԱ-ի հետ	237
<b>2.1. 3. Վարկային կազմակերպությունների դեմ</b>	<b>38</b>

<b>Քննության ընդունված պահանջների ելքեր (հատ դեպք)՝ [1]</b>	<b>580</b>
Պահանջը բավարարվել է հաշտեցման միջոցով	186
Պահանջը մասնակի է բավարարվել	41
Պահանջը բավարարվել է	11
Պահանջը մերժվել է	250
Պահանջի քննությունը դադարեցվել է	52
Պահանջի քննությունը մերժվել է	40

Հաշտարարի գրասենյակ կարելի է դիմել՝ զանգահարելով (374) 60-70-11-11 հեռախոսահամարով կամ այցելելով Մ. Խորենացու փող., 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն, 7-րդ հարկ: E-mail: info@fsm.am . Web: www.fsm.am

1 Հաշվետու ժամանակաշրջանում հանգուցալուծված պահանջ-դիմումների ելքեր